

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ БОГОСЛОВИЯ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF THEOLOGY

ՏԱՐԵԳՒՐՔ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈՒՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԺԱ

ЕЖЕГОДНИК

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ

ТОМ XI

YEARBOOK

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES

VOLUME XI

ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ
ЕРЕВАН - 2016

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ - 2016

YSU PRESS
YEREVAN - 2016

ԿԻՆԸ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԵՁ

Հասմիկ Հարությունյան

«Հովհ. Թումանյանի գրական ժառանգության մեջ կնոջ կերպարը վեր է հառնում իր բոլոր դրսևորումներով՝ աղջիկ, հարս, մայր, խորթ մայր, ամուսին, այրի, հասարակության անդամ: Հայ կնոջը գրողը բացահայտում է ոչ միայն գեղարվեստական ստեղծագործություններում, այլև նամակներում և հոդվածներում՝ արտահայտելով իր մտորումներն ու ընկալումները կնոջ և նրա դիրքի մասին: Կնոջ հասարակական դիրքը նա պայմանավորում է հատկապես էթնիկ ավանդույթներով և կրոնով: Այս առումով նա քրիստոնյա և մահմեդական աշխարհների համեմատականներ է անցկացնում. «Հայը կամ վրացին իրեն կրոնի ոգով ու դարավոր տրադիցիաներով տղամարդուն ու կնոջը մի մարմին, մի բարոյական ամբողջություն ընդունելով և կնոջը ճանաչելով իր գոյության կեսը՝ դրել է նրան իր օջախի գլուխը, ուր և կենտրոնացրել է կյանքի վայելքներն ու երջանկությունը: Մահմեդականն, ընդհակառակը, կնոջն էլ նկատել է իբրև կյանքի վայելքներից մինը, փակել է հարեմում ու պահապաններ է դրել վրեն հսկելու» (Կինն ու մահմեդական պեղությունների անկումը, ԵԼԺ, հ. 7, Երևան, 1995, էջ 173):

Փորձելով բացահայտել հարեմի բուն էությունը՝ չի համաձայնում ընդունված կարծիքի հետ, թե այն ստրկություն է կնոջ համար. «Հարեմը ստրկություն չի, այլ շատ ավելի ցած ու ամոթալի մի վիճակ» (նույն տեղում): Հարեմի կնոջը համեմատելով ստրուկի հետ՝ ցույց է տալիս, որ «հարեմի կինը ոչ միայն չի աշխատում ու ոչ ոքի չի պահում, այլ ինքն էլ ապրում է իր էգության հաշվին, մի դրություն, որ... չկա ամբողջ կենդանական աշխարհքում» (նույն տեղում): Մեկ այլ հոդվածում գրողը հանգում է այն համոզման, որ «կենդանական աշխարհում ամենախրավազուրկ ու անկարող, պաշտպանության կարոտ մայրը կին-մայրն է, քանզի միայն կին-մոր հետ է պատահում էն տեսակ ստոր երևույթ, որ նա իրեն կամ իր զավակին ստիպված է լինում պահելու իր էգության գնով» (Մեր կյանքի հիմնական խնդիրը, ԵԼԺ, հ. 7, էջ 394):

Նկատենք, որ գրողը նկարագրում է մահմեդական Արևելքի բարքերը: Կովկասի մահմեդական ժողովուրդներին բնութագրական չի եղել հարեմը, և առհասարակ բազմակնությունը հազվադեպ է եղել: Կովկասում կինը միշտ էլ որպես սրբություն է ընկալվել, նույնացվել օջախի հետ: Գրողի վկայությամբ՝ կնոջ նկատմամբ կովկասյան մեծ հարգանքը, պատկառանքը դրսևորվել է նույնիսկ ավազակների ու հանցագործների պահվածքում. կողոպտելու նպատակով կառքը կանգնեցրած ավազակները կանանց չեն խուզարկել, և տղամարդն անձանոթ կնոջն է պահ տվել իր դրամապանակը. «Այս տիկնոջ պատվին ես դրան ներում եմ... Տեսնելով, որ ավազակներն իսկական ջենտլմեններ են ու կանանց ձեռք չեն տալիս, ես դրամապանակը տվի մեր կառքի մեջ նստած ուղևորուհուն » (*Дерзкий грабеж близ Аджикенда, ԵԼԺ, հ. 6, Երևան, 1994, էջ 99-102*):

Ավազակները հարգել են նաև գերդաստանի մեծ մոր խոսքը, երբ նա «ընդառաջ է ելել և խնդրել մի քանի բոլակ տուն չմտնել, որպեսզի տան կանայք հնարավորություն ունենան հագնվելու» (*О приследовании разбойников в казахском уезде, ԵԼԺ, հ. 6, էջ 104-106*):

Գրողի մշակած կովկասյան առասպելում նույնիսկ հսկա տղամարդը ականջալուր է լինում մոր խրատին. ազատ է արձակում իրենից թույլերին, քանզի կովկասյան ընկալմամբ մոր խրատներն իմաստուն են, և հեռու կարող են պահել չարիքից» (*Հսկան, ԵԼԺ, հ. 2, Երևան, 1990, էջ 143-148*):

Հարգելով Մելիքի քրոջ և մազերն արձակած մոր խոսքը՝ Դավիթ հրաժարվում է հերթական հարվածներից: Դավիթը չի հանդուրժում, որ հարկի դիմաց թշնամին տանում է 40 կույս աղջիկներ, նույնքան էլ «կանայք երկանք աղալու, ուղտեր բառնալու համար» (*Սասունցի Դավիթը, ԵԼԺ, հ. 4, Երևան, 1991, էջ 22*):

Բորչավեցի հայ կնոջ անարգված, անմխիթար վիճակը, որը գրեթե նույնությամբ նկարագրված է նաև Ե. Լալայանի «Բորչալուի գավառ» աշխատությունում¹, կարծես հակասում է վերը շարադրածին. «Բորչավում կինը դատապարտված է ավանդական արհամարհանքին, իբրև «առաջին մեղքի պատճառ», «դժոխքի դուռը», նզովված բոլոր սրբերից ու սրբություններից...ընդհանուր հարգանք չկա դեպի կինը. տղամարդի, անհատի բարեհայեցողությանը, քեֆին է թողած, թե նրան ընչի տեղ կոնի: «Մարդ

¹ Լալայան Ե., Բորչալուի գավառ, Երկեր, հ. 3, Երևան, 2004, էջ 159:

գդակը վեր ա դնում հետը մասլահաթ անում, խո իսան (մարդ) ա», ասում է տղամարդը կնոջ մասին» (*Բորչավում, ԵԼԺ, հ. 6, էջ 48*):

Այս բնութագրումներով գրողը պարզապես փորձում է հաստատել, որ, թեև կնոջ հասարակական դիրքը պայմանավորող գործոններից առաջնային են էթնիկ ավանդույթներն ու կրոնը, սակայն կնոջ վիճակը մեծապես կախված է նաև հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակից: Նա իրավացիորեն ընդգծում է, որ հասարակության մեջ կնոջ դիրքն ու վիճակը ուղիղ համեմատական են տվյալ հասարակության զարգացման մակարդակին, և այդ վիճակով կարելի է համապատասխան եզրակացությունների հանգել: Այսպիսով, ըստ Հովհ. Թումանյանի՝ կնոջ դիրքը հասարակության բարոյական ու տնտեսական հետամնացության չափման մի յուրօրինակ «կշեռք» է:

Քանի որ ավանդական հայ հասարակությունում կինն ընկալվում է որպես անձեռնմխելի սրբություն, զարմանալի չէ, որ քննադատության է արժանանում թեկուզ մեղավորին պատժելու նպատակով, կնոջ հետ պատահաձին հասարակական երանգ տվող տղամարդը: (*Աղքատի պատիվը, ԵԼԺ, հ. 5, Երևան, 1994, էջ 27-36*): Անընդունելի էր, որ, նույնիսկ արդարությունը, ճշմարտությունը բացահայտելու նպատակով, բռնության ենթարկված կինը ստուգվեր բժշկի կողմից: Այս օրինակով գրողը միաժամանակ փորձում է քննադատել մեր օրերին ևս հատուկ մի երևույթ. այսօր էլ շատ հանցանքներ անպատիժ են մնում, միայն թե որոշ ընտանիքներ երես չհանեն իրենց (ավելի ճիշտ կլինի ասել՝ հասարակության) «կեղտոտ սպիտակեղենը»: Թավադը իրեն հայիոյած չոբանին համաձայնում է ներել պայմանով, եթե «նրա խիզանը գցի աղի տեղը»: Նամուս ունեցող տղամարդը, գրողի հերոսների համոզմամբ, չի ընդունի նման ներումը (*Հառաչանք, ԵԼԺ, հ. 3, Երևան, 1989, էջ 76*): Նմանատիպ երևույթները պատահում են՝ պայմանավորված ոչ թե կնոջ նկատմամբ հարգանքի, պատկառանքի բացակայությամբ, այլ հասարակական այն կարգով, որին բնութագրական է հղիացածների խավը: «Պտղատու ծառին շատ քար կգցեն» ասացվածքով (*Աղքատի պատիվը*) ոչ թե արդարացնում, այլ կանանց հորդորում է ըմբռնումով ընդունել բոլոր հասարակարգերում պատահող, իրենց ամեն իրավունք վերապահող հարուստ, հղիացած անպատժելիների գոյությունը, նրանց անպարկեշտ վարմունքը հատկապես այն կանանց հանդեպ, ում «աչքերում յուղ կա» (*Հառաչանք*): Այսօր էլ գեղեցիկ աղջիկները ապահովագրված չեն պարապ երի-

տասարդների անպատկառ «հաճոյախոսություններից», զազրախոսություններից:

«Մարդի ծեծած-վարդի ծեծած» ասում է ծեծված, նախատված կինը» (*Բորչալվում, էջ 48*): Հովի. Թումանյանին, որպես հայ տղամարդու, թվում է՝ պիտի հաճելի լիներ բորչալվեցի հայուհու հնազանդ պահվածքը, համբերատարությունը, որ մեղմացնում է ավանդույթի խստությունը, ինչ-որ տեղ ընտանիքի ամրության գրավական է դառնում, բայց նրա համար «սա քիչ է, շատ է քիչ. սա դեռ մայրը, կինը, կյանքի ընկերը չի...» (*նույն տեղում*): Ավելին, գրողին չի բավարարում կնոջ միայն մայր լինելու առաքելությունը: Կինը պիտի ոչ միայն տղամարդու երեխաների մայրը լինի, այլև ամուսնու ոգևորության, «երազային կյանքով երբեմն ապրելու տենչը» բավարարող աղբյուր (*Փիլիպոս Վարդազարյանին, ԵԼԺ, հ. 9, Երևան, 1997, էջ 301*): Գրողը կարևորում էր կնոջ կրթությունը, զարգացած լինելը: Պատահական չէ, որ իր զրույցներով, խրատներով սեփական աղջիկներին փորձում էր դաստիարակել այդ ոգով, «պատրաստել» նաև որպես բազմակողմանի զարգացած կանայք, հասարակության անդամ: Որպես խոր հոգի՝ ժամանակ առ ժամանակ նա զգում էր կնոջ հետ «հոգեբանական-փիլիսոփայական-բանաստեղծական զրույցի» կարիք, ուստի, ինչպես նամակում խոստովանում է, կարոտում էր Մարիամ Թումանյանի հետ զրույցները (*Մարիամ Թումանյանին, ԵԼԺ, հ. 9, 349*): Ընտանեկան նամակները վկայում են, որ իր կնոջ նկատմամբ անկեղծ սիրո ու հոգատարության հիմքում մեծ գերդաստանի մոր գնահատանքն էր: Այնուամենայնիվ, ընտանեկան անհարթությունները, հատկապես ամուսնական առաջին տարիներին, բխում էին առավելապես կնոջ ծնողների, ոչ թե կնոջ հետ ունեցած անհամաձայնությունից¹:

Նա համոզված էր, որ կինն էական նշանակություն ունի տղամարդու, մանավանդ զգայուն տղամարդու վրա (*Մարիամ Թումանյանին, ԵԼԺ, հ. 9, էջ 267*): Թմուկ բերդի տիրոջ՝ Թաթուլի անպարտելիության գրավականներից մեկը, գրողի համոզմամբ, նրա կինն է՝ աներևակայելի գեղեցկությամբ, որը ցանկացած տղամարդու կարող է հերոսացման ոգեկոչել: Գրողը միաժամանակ համամիտ է մեծն Ֆիրդուսու այն խոսքերի հետ, որ կինը կարող է նաև հերոսի պարտության պատճառ դառնալ (*Թմկաբերդի առումը, ԵԼԺ, հ. 4, էջ 49-50*):

¹ **Շախկյան Գ.**, Թումանյանի ընտանեկան աշխարհը, Երևան, 2011:

Առհասարակ կանանց մտավոր ունակությունների մասին շատ բարձր է մտածում: Նա չի պաշտպանում այն թյուր կարծիքը, թե կանայք ունակ չեն: Նրա համոզմամբ՝ նպաստավոր պայմաններում կինը կարող է լուրջ ստեղծագործություններով հանդես գալ (*Կնոջ ստեղծագործական կարողության մասին, ԵԼԺ, հ. 7, էջ 540*):

Հայ գեղջկուհու ինչ-որ տեղ սահմանափակ մտակեցվածքը, որի մասին գրում է սրտի ցավով, գրողը նույնպես փորձում է բացատրել անբարենպաստ պայմաններով, ժողովրդի վիճակով, տնտեսության զարգացածության մակարդակով, կենցաղային բարքերով: «Մեր կանանցից մարդ չի դուրս գալ և մենք միշտ չկերած կկշտանանք, ավտորժակդ այնպես կփակեն, որ երբեք քաղց չզգաս, գնաս ու որձկալով ման գաս: Բայց ավար մարդ միշտ ունի մի քնքուշ էակի հետ գեղեցիկ-գեղարվեստական կապերով կապված լինելու կարոտը: Միթե կարող է հայ կինը ոգևորել մարդու: Ծածկամիտ, հաշվող, խելոք (իր թե, պոլիտիկոս), դրան ավելացրու անճաշակությունը... Սիրահարված երիտասարդին լսելու փոխարեն ասում է՝ որ աղջիկ ունենանք, օժիտը ո՞նց ենք անելու» (*Փիլիպոս Վարդապարյանին, ԵԼԺ, հ. 9, էջ 301, Գրողի նամակները, ԵԼԺ, հ. 6, էջ 410*): Գրողի զայրույթը ականավոր թումանյանագետ Լ. Հախվերդյանը բացատրում է նրանով, որ կնոջ բնության մեջ որքան բանաստեղծին ոգևորել է զգացմունքի թռիչքը, իր սերը պաշտպանելու կամքը, սիրո հավատարմությունն ու վարքագծի ազատությունը, այնքան հուսահատեցրել է զգացմունքն ու նկատառումը հավասարակշռելու մեղկությունը, խելքի նշան համարվող հաշվենկատ վերաբերմունքը սիրո հանդեպ¹:

Անկասկած, սրտի ցավով արված խիստ քննադատությունն անպայման հայ կնոջը դեպի լավը վերափոխելու, դրականը տեսնելու միտում ունի, այդ հույսով ու համոզմունքով է զայրույթն արտահայտում: Կինն իր մայրն է, իր կինը, իր աղջիկներն են, «Խրճիթում»-ի մայրը, ճախարակ մանող կինն է, գաղթականներին օգնած օր. Սաթենիկը, սարվոր կանայք են, և այս կանայք երբեք չեն կոչվի «առաջին մեղքի պատճառ», «դժոխքի դուռ»: Զայրույթը բխում է ահավոր ցավից: Կանանց այդպիսին չտեսնել՝ միայն դա է քննադատության նպատակը: Քննադատությամբ փորձում է նրանց ուղղելու, ճշտելու ճանապարհ ցույց տալ:

¹ Հախվերդյան Լ., Թումանյանի աշխարհը, Երևան, 1966, էջ 262:

Ավանդական հայ հասարակությունում, անշուշտ, կարևորվում էր աղջկա անունը, պատիվը: Այս միտքը գրողը դիպուկ արտահայտում է «Աղջկա պատիվը մի գիշերվա էկած ձյուն է. ամեն մի սև կետ շատ շուտ աչքի է ընկնում» ասացվածքով (*Դեպի հայրենիք, ԵԼԺ, հ. 5, էջ 434*): Հարսնացու ընտրելիս անպայման մեծ նշանակություն էին տալիս ընտանիքին, հարսնացուի դրական հատկանիշներն ամբողջացվում էին «լավ օջախից», «հալալ ծծկեր» արտահայտություններով (*նույն տեղում*):

Հասարակությունը դատապարտում էր հորանց տուն վերադարձած կնոջը՝ գերադասելով նրա մահը կամ առհասարակ չծնվելը, ծնողները դա համարում էին իրենց անունը մրոտել, ծեծով, անեծքով դուրս էին անում տանից, այդպիսով նպատակ ունենալով նաև «խրատել»՝ դաստիարակել: Եվ եթե հասարակության մեջ պատահում էին մարդիկ, ովքեր կարեկցում էին, փորձում էին աջակցել տուժածին, ծնողների համոզմամբ, նրանք խանգարում էին իրենց՝ «խրատելու նորատի աղջկան» (*Մարոն, ԵԼԺ, հ. 3, էջ 166*): Առհասարակ գրողն առավել կարևորել է աղջկա դաստիարակությունը. «Տղա մը կրթելը մարդ մը կրթել է, բայց մայր մը պատրաստելը ընտանիք մը կրթել է» (*Պր. Թումանյան դպրոցասեր տիկնանց որբանոց-վարժուհիների մեջ, ԵԼԺ, հ. 7, էջ 559*):

Անհանդուրժող էին «տարած-ետ բերած» աղջիկների նկատմամբ: Հայրը լիրբ, անզգամ է անվանում Անուշին՝ անիծելով նույնիսկ թագ ու պսակը: Առավել անհանդուրժող էին խաբված աղջկա հանդեպ. «Թեկուզ էն դռան շան հետ պսակեցեք, միայն թե պսակեցեք, մեկին տվեք, էլ աչքս տեսնի ոչ» (*Խաբված աղջիկ, ԵԼԺ, հ. 5, էջ 479*): Իր գրական հերոսների նկատմամբ գրողի վերաբերմունքից երևում է, որ կողմնակից չէ հասարակության նման անհանդուրժողական վերաբերմունքին: Գրողն ազատ սիրո կողմնակից է և երբ գրում է, որ աստղերը բամբասում էին լիրբ, անամոթ Թամարից, արտահայտում է ժողովրդի՝ ոչ թե իր վերաբերմունքը ամեն գիշեր սիրած տղային թաքուն հանդիպող աղջկա նկատմամբ (*Ախթամար, ԵԼԺ, հ. 2, էջ 100-102*):

Մեր կյանքի հիմնական խնդիրը մոր ու մանուկի պաշտպանությունն է համարում: Այս առումով քննադատում է ապօրինի կոչված ծնունդների դեմ եղած հալածանքը, որոնց մեծ մասը, ըստ գրողի, իսկական սիրո պտուղ է (*Մեր կյանքի հիմնական խնդիրը, էջ 395*):

Կոչ է անում Հայ եկեղեցուն՝ միջնորդել օրինավոր ճանաչելու հազարավոր հայ այրի կանանց ու աղջիկների՝ բռնաբարության հետևանքով ապագայում ծնվելիք երեխաներին (*Պետք է ընդունել, ԵԼԺ, հ. 7, էջ 269-270*):

Ավանդական հայ հասարակությունում դեռահաս կանայք երեսները ծածկում էին քուշուշկով՝ քողով (*Մեհրի, ԵԼԺ, հ. 3, էջ 37-49*): «Հարգևոր հարսի» չափանիշը սկեսուրի, սկեսրայրի մոտ չխոսելն էր, ականա խախտելու դեպքում կարող էր նույնիսկ թռչունի վերափոխվել (*Անիծած հարսը, ԵԼԺ, հ. 2, էջ 108*): Ընդունված էր աղջիկներին վաղահաս ամուսնացնել՝ հաշվի չնստելով նրանց կարծիքի ու զգացմունքների հետ: Վերոնշյալ և նմանատիպ երևույթները, որոնց մասին գրում է նաև Ե. Լալայանը¹, հիմք են տվել որոշ մասնագետների նահապետական գյուղաշխարհի կնոջ վիճակը գնահատել ստրկական: Թեև Մարոյի նախատիպ հանդիսացող Անտոնյան Սաքոյի դստեր հետ կատարված դեպքը մինչև այժմ էլ Դսեղում հիշում են, այնուամենայնիվ, գրողը փորձում է կոտրել հայ կնոջ ճնշված, իրավագուրկ լինելու մասին կարծրատիպը՝ բավականին գունեղ ներկայացնելով աղջիկների ու երիտասարդ հարսների կյանքի անհոգ դրվագներից մեկը՝ ջրի գնալը աղբյուր, որը նրանց շփման, զրուցելու, բամբասանքի հավաքատեղին էր: Չնայած մոր խրատին, կշտամբանքին, որ «հասած աղջկան» վայել չէ ջահել չոբանների մոտ գնալը, Անուշը ջրի է գնում մոր կամքին հակառակ, հակառակ նաև հայ ավանդապահ, հլու-հնազանդ, խոնարհ աղջկա մասին եղած կարծրատիպի: Նման վարքագիծը Անուշի մորը թույլ է տալիս աղջկան նույնիսկ «մազդ կտրած», այսինքն՝ անամոթ որակել (*Անուշ, ԵԼԺ, հ. 3, էջ 79-109*), քանզի երկար մազը կնոջ արժանիքն էր, և հնում կանանց պատժելիս կտրում էին մազերը:

Ինչպես երևում է Անուշի հոր խոսքերից, աներևակայելի է, որ աղջիկը փախչի երիտասարդի հետ, ում դեմ են հայրն ու մայրը, իսկ եղբայրը ատում է. «Քանի գլուխ ունես քո ուսին» (*Անուշ, էջ 101*): Հանուն եղբոր՝ քույրը խոստանում է հրաժարվել սիրուց, սակայն Անուշը հավաքական կերպարն է Հովի. Թումանյանին համակրելի թեկուզ այն փոքրաթիվ կանանց, ովքեր պաշտպանում են իրենց մարդկային իրավունքը, նույնիսկ կյանքի գնով չեն զիջում իրենց ազատությունը, և փախչում է իր կամքով:

Այսօր էլ երբեմն հարթ չեն ընթանում հարսների ու նրանց ամուսինների դեռևս չամուսնացած քույրերի միջև հարաբերությունները: Հայ ընտանիքներում ընդունված է չամուսնացած աղջիկների նկատմամբ մի քիչ մեղմ, հանդուրժող լինելը, նրանց արտոնություններ տալն այն մտայնու-

¹ Լալայան Ե., նշվ. աշխ., էջ 121, 158:

թյամբ, որ միևնույնն է, շուտով կամուսնանան, և ազատությունները կսահմանափակվեն: Իսկ ջահել հարսները, մոռանալով, որ իրենք էլ այդ փուլն անցել են իրենց ընտանիքներում, սկսում են նախանձով ու չարությամբ համեմատվել տալերի հետ, և եթե դա անցնում է բանականության սահմանները, սկսում են թունավորել և՛ իրենց, և՛ մյուսների կյանքը: «Կըռնատ աղջկա» (ԵԼԺ, հ. 5, էջ 202-210) հարսի նախանձն իսկապես անցնում է թույլատրելի սահմանները: Առհասարակ չար, նախանձ կնոջ կերպարը դրսևորվում է նաև «Գառնիկ ախպեր»-ում (ԵԼԺ, հ. 2, էջ 129-136):

Դավաճան կնոջ կերպարը մարմնավորված է Թմկա տիրուհով: Կնոջ դավաճանության պատճառը փառասիրությունն է, ավելի հարստանալու, դիրքով բարձրանալու, թագուհի դառնալու գայթակղությունը (*Թմկաբերդի առումը*):

Բոլոր ժամանակներում էլ եղել են, կան ու կլինեն կանայք, որ առիթ են փնտրում համեմատվելու ուրիշների հետ՝ իրենց բախտով, դիրքով, ունեցվածքով, համոզված լինելով, որ իրենք ավելիին են արժանի, քան դիմացինը: Այս երևույթն է դրսևորվում «Աղքատի պատիվը» պատմվածքում. կանայք համարձակվում են բարկանալ, նախատել ամուսիններին, համեմատել «շաշ Սիմոնի» հետ, իրենք էլ համեմատվել նրա կնոջ հետ, պահանջ ներկայացնել հագուստի, կոշիկի: Գրողը գնահատում է պարկեշտ, ամոթխած սիրունին՝ համեմատելով մացառի տակ բուսնած ծաղկի հետ, որին միայն արևի փոքրիկ շող է հարկավոր, որ գոհանում է, բավարարվում է քչով, նրան հետաքրքիր չէ, որ այլ ծաղիկներ խնամվում են բուրաստանում, չի նախանձում ուրիշներին, չի համեմատվում: Գնահատում է նաև ճարպիկ, խելացի, աշխույժ, մի քիչ վայրի, ոչ մեղմ կանանց, իր մոր օրինակով ներկայացնում է սարի կնոջ կերպարը, գյուղացիների բնութագրմամբ «գիժ պախրի կով», ումից կարող էր «վախենալ», այսինքն՝ հարգանքից զգաստանալ նաև վարժապետ Սահակը (*Ինքնակենսագրություն*, ԵԼԺ, հ. 6, էջ 142-145):

Քաղքենի կնոջ էությունը բացահայտվում է Նատոյի կերպարով (*Գիքորը*, ԵԼԺ, հ. 5, էջ 37-53), ով անընդհատ տրտնջում է ամուսնուն, պահանջում է ազատվել ծառայից՝ չանսալով սկեսրոջ խորհուրդներին: Պառավ դեղիի օրինակով գրողը ցույց է տալիս, որ անսահման բարությունը կարող է պահպանվել նաև հարստացած ընտանիքների կանանց հոգում. սովորեցնում էր Գիքորին, խնամում հիվանդ ժամանակ:

Համեստ, երբեմն միամիտ տղամարդիկ, ում հեշտ է խաբելը ասենք, շուկայում, խանութում, նաև ոչ արի տղամարդիկ հիմա էլ կան: Նրանց փնթփնթան կանայք, որ իրենց իրավունք են վերապահում ամուսիններին քարկոծելու, չարախնդալու, օգտվելով պարզամտության հերթական առիթից, ներկայանում են «Բարեկենդանի» հերոսուհու (ԵԼԺ, հ. 5, էջ 218-220), Քաջ Նազարի կնոջ (ԵԼԺ, հ. 5, էջ 235-245) կերպարներով:

Ձախորդ Փանոսի կնոջ նկատմամբ ակնհայտ հեզնանքը ցույց է տալիս, որ ավանդական հասարակությունը չի խրախուսում այրի կանանց ամուսնությունը՝ ձևական համարելով նրանց սուգը (ԵԼԺ, հ. 5, էջ 252):

Հատկապես հեքիաթներում (ներառյալ թարգմանական) իր բոլոր դաժան կողմերով վեր է հանում ազգություն չունեցող խորթ մոր կերպարը, գրողը նկարագրում է երևոյթներ, որոնք համապատասխանում են խորթ մոր մասին եղած կարծրատիպերին, դրանք խտացվում են «չար», «անսիրտ» մակդիրներում (*Մոխրոպրը*, ԵԼԺ, հ. 5, էջ 378-387, *Գեղեցկուհի Վասիլիսան*, ԵԼԺ, հ. 5, էջ 302-312, *Հենզելն ու Գրետելը*, ԵԼԺ, հ. 5, էջ 363-372): Խորթ մորը գրողը ներկայացրել է նաև Դավթի հորեղբոր կնոջ կերպարով: Խորթ մոր կերպարանքի, նույնիսկ կեցվածքի, դեմքի արտահայտության մասին պատկերացում ենք կազմում «Պողոս-Պետրոս» ստեղծագործությունից¹: Հարազատ մայրը հինգ-վեց տարեկան մանուկներին չէր ստիպի անպայման աշխատել կերածի դիմաց կամ սպառնալ սպանել նրանց, եթե չգտնեն կորած հորթերին (ԵԼԺ, հ. 2, էջ 112-114):

Մայրերն օժտված են կանխազգացման ունակությամբ. թեկուզ հեռավորության վրա մոր սիրտը նախազգում է զավակի վիճակը, նրա հետ կատարվածը կամ կատարվելիքը: Գիքորի մայրը համարձակվում է ընդդիմանալ ամուսնու որոշմանը միմիայն սպառնացող վտանգից զավակին պաշտպանելու համար, թեև ի վերջո տեղի է տալիս: «Հին կոիվը» ստեղծագործության հերոս Վահանի մայրը ևս զգում է, որ տղան թաքուն մի ցավ ունի (*Հին կոիվը*, ԵԼԺ, հ. 4, էջ 63):

Ձավակ կորցրած մայրերը նույն կերպ են արտահայտում իրենց վիշտը. մղկտում են, ցավից խելագար բառաչում են, հանդուգն անեծքով ծառս են լինում դեպի երկինք (*Եղջերուն*, ԵԼԺ, հ. 5, էջ 86, *Անուշ*, էջ 104, 116, 121, *Դեպի անհունը*, ԵԼԺ, հ. 3, էջ 119):

¹ Լ. Հախվերդյան, նշվ. աշխ., էջ 321:

Փանոսի կնոջ, «Բարեկենդանի» հերոսուհու և այլ կանանց ոչ այնքան կատարյալ կերպարները վկայում են, որ գրողը անհիմն չի իդեալականացնում բոլորին, պատահում են նաև այդպիսիք: Նրանք, բարեբախտաբար, բացառություններ են ավանդական հայ հասարակությունում, պարզապես գրողը կյանքն է նկարագրում, և պարտավոր է նրանց էլ ներկայացնել, քանզի նրա հերոսները կենսական հիմքեր ունեն: Բացի այդ, նման կանանց քննադատական նկարագրությունը կոզնի, կնպաստի նրանց վերափոխվելուն, վերանալուն, քննադատությամբ կկանխվի նմանների ավելանալը, գոյությունը նաև մեր օրերում:

ԿԻՆԸ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հասմիկ Հարությունյան

***Բանալի բառեր** - կնոջ հասարակական դիրք, կարգավիճակ, գործառույթ, հայ կնոջ մասին կարծրատիպ, սահմանափակ մտակեցվածք, ազատ սեր, աղջիկ, հարսնացու, հարս, մայր, խորթ մայր, ամուսին, այրի, դավաճան կին, քաղքենի կին*

Հոգվածում փորձ է արվում ներկայացնել Հովի. Թումանյանի խոհերն ու ընկալումները կնոջ (հատկապես հայ կնոջ) և նրա դիրքի մասին՝ ըստ գրողի գրական ժառանգության մեջ եղած հարուստ նյութերի: Կնոջ հասարակական դիրքը գրողը պայմանավորում է հատկապես էթնիկ ավանդույթներով և կրոնով, հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակով: Գրողը չի կիսում այն թյուր կարծիքը, թե կանայք ունակ չեն: Հայ գեղջկուհու ինչ-որ տեղ սահմանափակ մտակեցվածքը, որի մասին գրում է սրտի ցավով, գրողը նույնպես փորձում է բացատրել անբարենպաստ պայմաններով: Գրողը փորձում է կոտրել հայ կնոջ ճնշված, իրավազուրկ լինելու մասին կարծրատիպը: Հովի. Թումանյանի գրական ժառանգության մեջ կնոջ կերպարը վեր է հանում իր բոլոր դրսևորումներով՝ աղջիկ, հարս, մայր, խորթ մայր, ամուսին, այրի, հասարակության անդամ:

ЖЕНЩИНА В ЛИТЕРАТУРНОМ НАСЛЕДИИ ОВ. ТУМАНЯНА

Асмик Арутюнян

***Ключевые слова** - общественное положение женщины, статус, функция, стереотип об армянской женщине, ограниченный менталитет, свободная любовь, дочь, невеста, невестка, мать, мачеха, жена, вдова, предательница, мещанка*

В статье представлены восприятия и размышления Ов. Туманяна о женщине (особенно армянской) и ее положении в обществе по материалам художественного наследия писателя. Общественное положение женщины поэт объясняет и обосновывает этническими и религиозными традициями, социально-экономическим развитием общества. По его мнению, женщина – лицо общества. В армянской действительности и вообще на Кавказе женщина воспринимается как святыня. Туманян не разделяет превратного представления о том, что женщины неумелы. В то же время он необоснованно не идеализирует всех женщин. Ограниченный менталитет армянской крестьянки писатель критикует с болью, имея искреннюю цель преобразовывать ее к лучшему. По мнению Туманяна, жена не только мать, но и источник вдохновения мужа. Писатель пытается сломать стереотип бесправности и угнетенности армянской женщины. В его литературном наследии женщина представляется во всех своих функциях и статусах на разных этапах жизни – девушка, дочь, невеста, невестка, жена, вдова, мать, мачеха, член общества и т.д.

WOMAN IN THE LITERARY LEGACY OF HOVH. TOUMANYAN

Hasmik Harutyunyan

Keywords: *social position of woman, status, function, stereotype of Armenian woman, limited mentality, free love, daughter, bride, daughter-in-law, mother, step mother, wife, widow, traitoress*

This paper seeks to present Hovh. Toumanyan's perceptions, thoughts, attitude about women and their position in the Armenian traditional society. Social position is conditioned by ethnic and religious traditions, level of the economic development of society. Woman is a face of society. Woman is perceived as a saint in Armenian reality and in the Caucasus in general. The poet does not share the wrong idea, that women are not skilful. At the same time he does not idealize all women. He is criticizing with pain, but also suggesting explanations for the causes of Armenian peasant-women's limited mentality, and he has a sincere aim to transform them to better condition. He attempts to break the stereotype of women, who is oppressed and deprived in civil rights. According to Toumanyan's perceptions, wife is not only mother, but also source of inspiration of her husband. In the literary legacy of Hovh. Toumanyan woman is presented in her all functions and different periods of life – girl, daughter, bride, daughter-in-law, wife, widow, mother, step mother, sister-in-law, member of society.